ՀՐԱՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Երևան

N 420 - Ա «06» մարտ 2014թ

ՀԱԿԱՌԵԶՈՒՍ ԻՄՈՒՆՈԳԼՈԲՈՒԼԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին՝ N1300-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 12-րդ կետի դ) ենթակետը, հակառեզուս իմունոգլոբուլին պատրաստուկի տրամադրման գործընթացը կանոնակարգելու նպատակով,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Հակառեզուս իմունոգլոբուլին պատրաստուկի բաշխման ցուցակը՝ համաձայն հավելվածի.

2. «Պրոֆ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն պարոն Սմբատ Դաղբաշյանին՝ հակառեզուս իմունոգլոբուլին պատրաստուկի տրամադրումը ծննդօգնության ծառայություններ մատուցող բուժհաստատություններին իրականացնել համաձայն հավելվածի:

3. Առաջարկել՝ մարզերի առողջապահության և սոցիալական հարցերի վարչությունների և Երևանի քաղաքապետարանի առողջապահության վարչության պետին, ծննդօգնության ծառայություններ մատուցող բուժհաստատությունների ղեկավարներին՝

1) իրականացնել արյան ռեզուս բացասական պատկանելիությամբ կանանց հակառեզուս իմունոգլոբուլին պատրաստուկի նշանակումը համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 29.11.2013թ. «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մակաբարձագինեկոլոգիական բուժօգնության կազմակերպման չափորոշիչները հաստատելու մասին» N 80 -Ն հրամանի I գլխի հավելված 1-ի 7-րդ կետով հաստատված մեթոդաբանության,

2) հակառեզուս իմունոգլոբուլին պատրաստուկի ստացումը, պահպանումը, բաշխումը, իրացումը և ՀՀ առողջապահության նախարարություն համապատասխան տեղեկատվություն ներկայացնելը իրականացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 04.03.2011թ. «Հակառեզուս իմունոգլոբուլին պատրաստուկի տրամադրման մասին» N 344-Ա հրամանի համաձայն:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Սերգեյ Խաչատրյանին:

ԴԵՐԵՆԻԿ ԴՈՒՄԱՆՅԱՆ